Թեմա՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Առարկա՝ Հետազոտական աշխատանք

Վերապատրաստող դասախոս՝ Վ. Սարգսյան

Վերապատրաստվող ուսուցիչ՝ Ռոբերտ Նազարյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ---------- 3

Գլուխ 1. Արժեհամակարգ ձևավորելիս սովորողի վրա ազդող գործոնները ---------- 4

Գլուխ 2. Սպորտի դերը արժեհամակարգի ձևավորման մեջ ---------- 7

Գլուխ 3. Հանրակրթական «Շախմատ» առարկայի ուսուցման հայեցակարգ ---------- 10

Գլուխ 4 Ի՞նչ արժեքներ է զարգացնում շախմատը, ի՞նչ բնավորություն է տալիս շախմատը ----------12

Վերջաբան ---------- 14

Գրականության ցանկ ---------- 16

Ներածություն

Արժեհամակարգ տերմինը մանկավարժության մեջ բավական լայն շառավիղով հասկացություն է: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է սպորտային ու հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես մեծ է շախմատի դերը: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական ու մեր դեպքում մասնավորապես սպորտային նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:

Գլուխ 1. Արժեհամակարգ ձևավորելիս սովորողի վրա ազդող գործոնները

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ սպորտային, ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով[1]: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում

[1] Նարինե Թադևոսյան, Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում, Աշտարակ, 2022:

է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն):

Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն: Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ինչպես ընտանիքում, այնպես էլ ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն

է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

Գլուխ 2. Սպորտի դերը արժեհամակարգի ձևավորման մեջ

Սպորտը բացի արժեքային համակարգի ձևավորման բաղկացուցիչ մաս լինելուց նաև երեխայի սոցիալիզացիայի հարցում է օժանդակող գործոն հանդիսանում:

Սոցիալիզացիան և՛ գործընթաց է, և՛ արդյունք անձի մուտքի, հասարակությանը «ընտելանալու», խմբերի, կոլեկտիվների մեջ նրա հարմարվելու, սոցիալապես անհրաժեշտ որակների զարգացում: Այն իրականացվում է տարբեր իրավիճակներում, որոնք բխում են բազմաթիվ հանգամանքների փոխազդեցությունից: Անձի վրա այդ հանգամանքների կուտակային ազդեցությունն է, որ պահանջում է իրեն պահել և լինել ակտիվ: Սոցիալիզացիայի գործոնները այն հանգամանքներն են, որոնց պայմաններում պայմաններ են ստեղծվում սոցիալականացման գործընթացների համար: Սոցիալիզացիայի գործոնները զարգացման միջավայր են, որոնք պետք է նախագծվեն, լավ կազմակերպվեն և նույնիսկ կառուցվեն: Արգացող միջավայրի հիմնական պահանջը մթնոլորտ ստեղծելն է, որում գերակշռելու են մարդկային հարաբերությունները, վստահությունը, անվտանգությունը և անձնական աճի հնարավորությունը: Այս իմաստով, սպորտը սոցիալականացման ակտիվ գործոններից մեկն է: Այն ներթափանցում է ժամանակակից հասարակության բոլոր մակարդակները `լայնորեն ազդելով հասարակության կյանքի հիմնական ոլորտների վրա: Այն ազդում է ազգային հարաբերությունների, գործարար

կյանքի, սոցիալական կարգավիճակի վրա, ձևավորում է նորաձևություն, էթիկական արժեքներ, մարդկանց կյանքի ձև[2]:

Սպորտը թույլ է տալիս բացահայտել անձի էության նոր ասպեկտները, քանի որ այն պայմաններ է ստեղծում և հնարավորություններ է ընձեռում այն գործունեության համար, որի միջոցով զարգանում է անհատի սոցիալականացման գործընթացը, հասարակության մշակույթի տարբեր արժեքների փոխանցումը մարդու ներքին բովանդակության հարթություն: Սպորտում, ինչպես նաև ամբողջ մշակույթում, զարգանում է անձի կողմից նոր արժեքների յուրացման գործընթացը, որի հիման վրա տեղի է ունենում վերաբերմունքի, արժեքային կողմնորոշման և սոցիալական կարիքների զարգացում: Մյուս կողմից, անհատականությունը ներառված է հասարակության սոցիալական կյանքի ակտիվ գործունեության մեջ:

Սպորտում առավել հստակորեն դրսևորվում են ժամանակակից հասարակության համար այնպիսի կարևոր արժեքներ, ինչպիսիք են հաջողության հասնելու հավասարությունը, հաջողության հասնելը, առաջինը լինելու ձգտումը, ոչ միայն հակառակորդին, այլև ինքն իրեն հաղթելու համար: Իհարկե խիստ ցանկալի է, որ պետական մոտեցում ու հայեցակարգ լինի մասսայական սպորտի զարգացման համար, սակայն անգամ դրա բացակայությունը չի խանգարում սպորտի հանրահայտության ու դրանից բխող ազդեցության վրա, ինչի շնորհիվ էլ դպրոցական տարիքի երեխայի մոտ արժեհամակարգի ձևավորման փուլում սպորտը զբաղեցնում է որոշակի դեր:

---

[2] Սպորտը՝ որպես սոցիալականացման գործոն: Ամփոփում. «Սպորտի սոցիոլոգիա», https://oimurschool.ru/hy/biznes/sport-kak-faktor-socializacii-referat-metodicheskie/

Մարդիկ, ովքեր «սպորտի դպրոց» են անցել, համոզված են, որ սպորտը նրանց օգնել է զարգացնել ուժի և ներուժի հավատը, ինչպես նաև դրանք օգտագործելու ունակությունը: Սպորտը սովորեցնում է ձեզ զոհաբերել՝ նպատակին հասնելու համար: Մարզական խաղադաշտում երիտասարդ մարզիկների քաղած դասերը միտված են օգնելու նաև կյանքում: Մարզիկներից շատերը պնդում են, որ հենց սպորտը նրանց դարձրեց անձնավորություն, ընդունակ մարդ: Սպորտի միջոցով իրականացվում է ժամանակակից կյանքի սկզբունքը՝ « հույսդ դիր ինքդ քեզ վրա»: Սա նշանակում է, որ դեռ վաղ տարիքից երեխան սկսում է ինքնուրույն լինել, սեփական խնդիրներին ինքնուրույն լուծումներ գտնել, ինչն էլ վերջիվերջո դառնում է բնավորության գիծ:

Գլուխ 3. Հանրակրթական «Շախմատ» առարկայի ուսուցման հայեցակարգ

Շախմատ առարկայի ուսուցման նպատակն է զարգացնել տարրական դպրոցում սովորողների՝ փոփոխվող, ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու, դրանք գնահատելու և լուծման ուղիներ ու տարբերակներ գտնելու կարողություններ, խթանել նրանց որոնողական գործունեությունը, զարգացնել բազմատարբերակային (դիվերգենտ), այլընտրանքային, քննադատական և ստեղծագործական մտածողությունը:

Հիմք ընդունելով, որ շախմատ ուսումնական առարկան նպաստում է սովորողների ինտելեկտի զարգացմանը՝ առավելապես կարևորում ենք դրա դերը մտածողության ձևավորման գործընթացում: «Շախմատ» ուսումնական առարկան զարգացնում է կոնվերգենտ ու դիվերգենտ մտածողության ձևերը: Այն հնարավորություն է տալիս մտածել մի քանի հնարավոր քայլերի մասին, գնահատել դրանք և ընտրել լավագույնը:

«Շախմատը» զարգացնում է մտածողության ֆոկուսային (կենտրոնացված) և դիֆուզ (ցրված) մտածողության ձևերը: Այն հնարավորություն է տալիս որոշ ժամանակ կենտրոնանալ խաղի վրա, ապա մրցակցի քայլի ժամանակ անցնել դիֆուզ մտածողության: Մտածողության երկու եղանակների այս հերթագրումը համարվում է կարևոր ՝ ուղեղի արդյունավետ աշխատանքի համար:

«Շախմատ» առարկան նպաստում է սովորողների մոտ վերլուծական ու քննադատական, ստեղծագործական և այլընտարանքային մտածողության ձևերի զարգացման, կանխատեսելու կարողության, իրավիճակների ընթացքի վրա ազդելու ունակության ձևավորմանն ու զարգացմանը, երևակայության և

ստեղծագործականության միջոցով՝ սովորելու կարողության խթանմանն ու կրթության արժևորմանը։

«Շախմատ» ուսումնական առարկայի յուրացման ընթացքում զարգանում են սովորողների մտավոր գործողությունների ներքին պլանավորման, բարդ իրավիճակներում որոշումների ընդունման, ինքնավերլուծության կարողությունները, կամածին ուշադրությունը և հուզական ինտելեկտը, ինչպես նաև վարքի ինքնակազմակերպումը, կարգապահությունը և պատասխանատվությունը։

Սպորտի տեսանկյունից շախմատը զարգացնում է սովորողի կամային որակները, մինչև վերջ պայքարելու, օբյեկտիվ լինելու, ճիշտ գնահատելու, ինչպես նաև արժանապատիվ պարտվելու կարողություններ։

Արվեստի առումով շախմատը զարգացնում է աշակերտի ճաշակը, գեղեցիկը ընկալելու և գնահատելու կարողություններ։ «Շախմատ» առարկայի դասավանդման հիմնական սկզբունքները շախմատային կրթության հասանելիության ապահովում, առարկայի ուսուցմանը սովորողների ակտիվ մասնակցություն, առարկայի ուսուցման գործնական ուղղվածությունը[3]։

[3] «Արժեքային համակարգի ձևավորումը շախմատ առարկայի դասընթացին», Անի Կարապետյան, Երևան, 2022թ.։

Գլուխ 4. Ի՞նչ արժեքներ է զարգացնում շախմատը, ի՞նչ բնավորություն է տալիս շախմատը

Նախ շատ կարևոր է ընդգծել բուն շախմատի տված իմացական ու արժեհամակարգային առանձնահատկությունները՝

1. դպրոց հաճախելով՝ երեխան շարունակում է պահպանել նախադպրոցականի խաղի հանդեպ հետաքրքրությունը, որը դրսևորում է նաև շախմատի պարապմունքներին
2. շախմատն ունի խաղային այնպիսի բաղադրիչներ, որոնք ուղղակի կամ անուղղակի մոտիվացնում են երեխայի ուսումնական գործունեությունը
3. շախմատի դասերն (պարապմունքները) ավելի շատ հնարավորություն ունեն ամրապնդելու հետադարձ կապերը, որոնք անհրաժեշտ են ուսումնական գործընթացի կարգավորման համար
4. շախմատային խաղը հնարավորություն է տալիս երեխային և դասավանդողին վերահսկելու և գնահատելու իրենց գործունեության միջանկյալ և վերջնական արդյունքները
5. շախմատը հնարավորություն է տալիս պլանավորելու շախմատային քայլերի հաջորդականությունը, հատկապես ոչ ստանդարտ տիպի որոշումներ կայացնելիս
6. շախմատի խաղը ինքնուրույն կազմակերպվող գործունեություն է սկզբից մինչև վերջ։ Շախմատն իր բնույթով հիմնականում մնում է խաղ։ Շախմատը ենթարկվում է բոլոր խաղային ձևերի կարգ ու կանոնին, որն ուղղված է երեխայի ընդհանուր կուլտուրայի դաստիարակմանը և որպես հանրակրթական դպրոցում ուսուցանվող

պարտադիր առարկա՝ համարվում է ոչ միայն առողջ ժամանցի կազմակերպման, գեղագիտական պահանջմունքների բավարարման և դաստիարակության յուրահատուկ միջոց, այլ նաև էապես նպաստում է անձի սոցիալականացմանը, ճանաչողական գործընթացների զարգացմանը և ամրապնդմանը, ինչն էլ կարող է խթան հանդիսանալ մյուս առարկաները յուրացնելու հմտությանը և կարողությունների ձևավորմանը:

Հարկ է նաև ևս մեկ անգամ վերհիշել, թե ինչպես է ընթանում շախմատային պարտիան: Երկու խաղացողները՝ միմյանց **հակառակորդները**, նստում են խաղատախտակի առջև ու առաջին գործողությունը նստելուց հետո **ձեռքսեղմումն** է: Կարող ենք փաստել, որ խաղի հենց սկզբից երկու կողմերը, թեև մեկը մյուսին հաղթելու նպատակին, ձեռքսեղմումով պայմանավորվում են կռվել՝ խաղալ միմյանց դեմ որոշակի սկզբունքներ, արժեքներ, կանոններ պահպանելով: Սա շատ կարևոր է, որպեսզի երեխայի մոտ ձևավորվի արդարության ու պայմանների հավասարության զգացում, ինչին մենք կանդրադառնանք ստորև: Ապա սկսում է շախմատային պարտիան, որը կարող է անգամ 4 ժամը գերազանցել ու ամբողջ պարտիայի ընթացքում հակառակորդները խաղում են խիստ լռության մեջ: Այսինքն պարտիան, որտեղ խաղացողի գերնպատակը հակառակորդին հաղթելն է, չի անցնում զրույցով, քննարկումով, հարցուփորձով, աղմուկով, այլ փոխարենը լուռ միտքն է աշխատում: Եթե պրոյեկտենք սա շախմատիստի կյանքին, կարող ենք փաստել, որ դեռ դպրոցական տարիքից շախմատիստներին բնորոշ է **հանգիստ, չափված ու զուսպ վարքը**՝ ճիշտ այնպես, ինչպես ընթանում է շախմատային խաղը:

Վերջաբան

Եվ որպես վերջաբան, հարկ ենք համարում շեշտել այն հիմնավորումները, որոնցով պայմանավորված շախմատը հանդիսանում է հանրակրթության պարտադիր առարկա։

1. Շախմատն արդար խաղ է։ Փոքրիկը, որ դեռ 5-6 տարեկան է, սկսում է սովորել մի խաղ, որը լիովին արդար է։ Չկա մի երրորդ կողմ, որը կարող է խոչընդոտել կամ հանգեցնել անարդարության։ Փոքր տարիքից երեխան խաղում է շախմատ և սովորում՝ ինչպես հաղթել և պարտվել արդար, ինչպես պայքարել արդար։ Նա սովորում է ընդունել սեփական պարտությունն արժանապատվորեն և հաղթել արժանապատվորեն, իսկ երբ երկու խաղընկեր միմյանց ձեռք են սեղմում, նրանք համաձայնում են հարգել այս արժեքները։
2. Շախմատը հնարավորություն է տալիս երեխային ինքնուրույն որոշումներ կայացնելու, գնահատելու իրավիճակը և գտնելու լավագույն լուծումը։ Նախքան 10-15 տարեկան դառնալը, ծնողները հաճախ թելադրում են երեխային ինչպես վարվել, բայց երբ երեխան սկսում է կայացնել սեփական որոշումները, նա ի վիճակի է վաղ տարիքից դառնալ ինքնուրույն անձ, ինչը շատ կարևոր է հասարակության և ողջ մարդկության համար։
3. Շախմատը հնարավորություն է տալիս երեխային վերլուծելու տարբեր իրավիճակներ և գտնելու լավագույն լուծումը, ինչի արդյունքում զարգանում են ինքնավերլուծության որակները։ Այն նաև հնարավորություն է տալիս երեխային բարելավել իրավիճակի

վիրտուալացման որակները և զարգացնել կենտրոնացումը՝ կանխատեսելու իրավիճակի հնարավոր բոլոր փոփոխությունները:

4. Շախմատն օգնում է երեխային զարգացնել ստեղծագործ մտածողությունը՝ տալով հնարավորություն անկանխատեսելի լինել հակառակորդի համար: Իհարկե, եթե Ձեր միտքը պայմանական է և ստեղծագործ չէ, դուք չեք կարող անակնկալի բերել հակառակորդին կամ դնել նրան անսպասելի իրավիճակի մեջ: Ահա թե ինչու, երեխան, ով խաղում է շախմատ, զարգացնում է իր ստեղծագործ և յուրահատուկ մտածելակերպը:

Գրականության ցանկ

1. Թաղևոսյան Նարինե, Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում, Աշտարակ, 2022:
2. Կարապետյան Անիմ «Արժեքային համակարգի ձևավորումը շախմատ առարկայի դասընթացին», Երևան, 2022թ.:
3. Սպորտը՝ որպես սոցիալականացման գործոն: Ամփոփում. «Սպորտի սոցիոլոգիա», https://oimurschool.ru/hy/biznes/sport-kak-faktor-socializacii-referat-metodicheskie/